ԵՐԲ Է ՍԿՍՎԵԼ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Կ. Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ (Լենինգրադ)

Հայերի ապստամբությունը Սասանյան իշխանության դեմ V դարի վերջերին մեր հին պատմության նշանակալից դեպքերից է։ Դիմելով զենքի, համագործակցելով հարևան վրացիների հետ, տանելով հաղթանակներ ու կրելով պարտություններ, հայերը կարողացան դիմադրել բռնի կրոնափոխության ձգտումներին ու վերականգնել իրենց՝ լայն չափի հասնող ինքնավարությունը։ «Վարդանանց» պատերազմի հետ մեկտեղ Վահան Մամիկոնյանի ապստամբությունը իր փառավոր տեղն է գրավում հայոց պատմության էջերում։

1984 թ. լրանում է այդ շարժման 1500-ամյակը, մի հանգամանք, որ ինքնին հետաքրքրություն է առաջացնելու դեպի մեր պատմության այդ դրվագը։ Թողնելով ապագային ապստամբության ամբողջական ուսումնասիրությունը, սույն հոդվածում մենք փորձ ենք կատարում լուսաբանել լոկ ժամանակագրական հարցերը։ Այդպիսի վերլուծության անհրաժեշտությունն ակներև է։ Հայագիտական գրականության մեջ ապստամբությունը, իբրև օրենք, թվագրված է 481—484 թթ.[1]*, իսկ վրացագիտական աշխատություններում 484 թ. նշված է որպես սկիզբ*[2]*, հաղվադեպ նշված են նաև 482—484 թթ.։ Ժամանակագրական առումով անհամաձայն այդ տեսակետները նկատի ունեն միևնույն դեպքերը և բոլորը խարսխված են միևնույն գրավոր սկզբնաղբյուրի վրա։ Մեր խոսքը վերաբերում է ապստամբության գլխավոր (եթե ոչ եզակի) սկզբնաղբյուրին՝ Ղազար Փարպեցու Պատմությանը (Վահանին ուղղված հոշակավոր թղթում այդ անցքերի մասին կան միայն ակնարկներ)։ Ղազար Փարպեցին գրել է իր աշխատությունը V դարի վերջին տասնամյակում (շուրջ 500 թ.), ուրեմն նա եղել է ապստամբության ժամանակակիցը. բացի այդ, անհրաժեշտ է հատուկ նշել, որ տասնյակ տարիներ անընդհատ մեր պատմիչը կապված է եղել Վահան Մամիկոնյանի ընտանիքի հետ, սպարապետը մանկուց եղել է նրա մտերիմը,*

---

1 *Տե՛ս օրինակ՝ Հայ ժողովրդի պատմություն, առաջին մաս., խմբագրությամբ Բ. Ն. Առաքելյանի և Ա. Ռ. Հովհաննիսյանի. Երևան, 1951, էջ 112։* Очерки истории СССР. Кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР—III—IX вв. М., 1958. с. 204—206; К. В. Тревер. Очерки по истории и культуре Кавказской Албании. М.—Л., 1959, с. 217. *Հ. Գ. Ժամկոչյան, Ա. Գ. Աբրահամյան, Ս. Մելիք-Բախշյան. Հայ ժողովրդի պատմություն. հ. I, Երևան, 1963, էջ 338։* R. Grousset. Histoire de l'Arménie. Paris, 1947, p. 217, et. sq. Histoire des Arméniens, sous la direction de Gérard Dédéyan. Toulouse, 1982. p. 166. *Տե՛ս նաև՝* Советская историческая энциклопедия. I, 1961, сто. 774; *Ս. Երեմյան, Մամիկոնյաններ. Հայկական սովետական հանրագիտարան, 1981, էջ 193 և այլն։*

2 *Տե՛ս օրինակ,* Очерки истории СССР, с. 250—251; Н. А. Бердзенишвили, В. Д. Дондуа, М. К. Думбадзе, Г. А. Меликишвили, Ш. А. Месхия. История Грузии, I. С древнейших времен до 60-ых гг. XIX в., учебное пособие. Тбилиси, 1962, с. 96; *Տե՛ս նաև՝* Советская историческая энциклопедия, II, 1962, сто. 1017 (Вахтанг I Горгасал), IV, 1963, стб. 833; Большая советская энциклопедия. IV, 1971, стб. 338 (Вахтанг I Горгасал).

3 ს. კაკაბაძე, ვახთანგ გორგასალი, თბ., 1959, გვ. 53. ლ. ნ. ჯაფარიძე, ლაზარ ფარპეცის ცნობები საქართველოს შესახებ, თბ., 1962, გვ. 142. საქართველოს ისტორიის ნარკვევები, ტომი II, თბ, 1973, გვ. 101. C. Toumanoff. Studies in Christian Caucasian History. Georgetown, p. 365, n. 31. С. Т. Еремян. Армения в эпоху Давида Непобедимого.—Вестник древней истории, 1980, № 4. с. 7:

ապա՝ հովանավորողը։ Ինչպես Վահանից, այնպես և նրա շրջապատից Ղազար Փարպեցին ի վիճակի է եղել ստանալ մանրամասն և ստույգ տեղեկություններ ապստամբության ընթացքի վերաբերյալ։

Ապստամբությանը նախորդող տարիներին Հայաստանում գլուխ էին բարձրացրել պարսկամետ նախարարները՝ Գաղիշո Խորխորունու գլխավորությամբ։ Պարսից Պերոզ արքայից արքայի առջև նրանք ամբաստանում են Գյուտ կաթողիկոսին (461—478 թթ.) և սպառապետ Վահան Մամիկոնյանին։ Սևաղնելով Վահանին արքունիքի մեծամեծների ու արքայի աչքում, նրանք ասում էին՝ «ոչ է հնար սմա առանց ապստամբութեան կալ ի Հայս»[4], հիշեցնում էին մեկ-մեկ Վահանի նախնիների մասին՝ ո՞րն է նոանցից, որ չի խռովեցրել Արյաց աշխարհը, ո՞րն է, որ մահ ու վնաս չի բերել։ Ժամանակը կգա և Վահանը «զնոյն խռովութիւնս յաղուցելոց է ի վերայ ձեր» (Կե, էջ 116, տ. 32)։ Ոմն ասորի, Վոիվ անունով, համոզում է Պերոզ արքային, իբր Վահանը, կուտակելով իր մոտ աշխարհի ամբողջ ոսկին, մտադիր է գնալ կայսեր մոտ կամ փախչել հոների երկիրը՝ «կամի խնդրել գունդ և ապստամբել» (Կե, էջ 117, տ. 11—12)։ Վերցնելով իր հետ ձեռքի տակ եղած ոսկին, Վահանը ներկայանում է Պերոզին և լիովին արդարանում։ Նա, Վահանը, այնքան կույր չէ, որպեսզի անտեսի Արյաց ուժը։ Այդ ուժը հնազանդեցրել է ապստամբ բազմաթիվ ազգեր. կարո՞ղ է արդյոք նա ապստամբել, երբ մի ծառա անգամ չունի իրեն կերակուր պատրաստելու համար։ Նրան ենթակա զինյալ ուժը կազմված է 2 թե 3 պատանուց, եթե պարսիկները նրան նեղեին և նա մտադրվեր իրոք գնալ ուրիշ երկիր, ինչու պիտի բերեր իր հետ այսքան ոսկի. այդ ոսկին նա բերել է կամավոր կերպով, առանց հարկադրանքի։ Իսկ եթե նա գիտի ծառայել պարսիկներին, ապա արժանի է, որպեսզի արքան նրան մեծարի ու պատվի (Կե, էջ 117, տ. 24—38)։

Որքա՞ն հիմնավորված են եղել Վոիվի կասկածները։ Հաշվի առնելով հետագա դեպքերը, տեսնում ենք, որ մատնելով Վահանին՝ Վոիվը և նրա նմանները այնքան էլ հեռու չեն եղել իրողության ճիշտ ըմբռնումից։ Ապստամբությունը, որը բռնկվեց քիչ հետո, պիտի ունենար իր նախապատմությունը՝ թեկուզ սպարապետի գաղտնի ծրագրերում։ Ավելին. ներում ստանալու համար բավական չեղան ո՛չ Վահանի ճառերը, ո՛չ էլ բերված ոսկին։ Պատմիչը նշում է, որ ներկայանալով արքունիք, Վահան Մամիկոնյանը «տկարանայ ի հաւատն»։ Վերադառնալով Հայաստան, սպարապետը այնպես էլ չկարողացավ կապել «չարախոսների» բերանը (Կե, էջ 116, տ. 38—40)։ Կորցնելով հոգու խաղաղությունը, նա անընդհատ խղճի խայթեր է ունենում (Կե, էջ 118), տառապում է կրելով «ուրացության», «մոգության», «սուտ» անունը (Կզ, էջ 118, տ. 41—119, տ. 14)։ Միանգամայն պարզ է, որ ճիշտ այնպես, ինչպես ժամանակին Վարդան Մամիկոնյանը, Վահանը ստիպված է եղել, թեկուզև առերես, ուրանալ քրիստոնեությունը և ընդունել մազդեզանց հավատքը[5]։ Լուրը այդ մասին տարածվել էր Հայաստանով մեկ, և տարիներ հետո Ղազար Փարպեցին, մեղմ նախատելով Վահանին, ձգտում է ցրել այն տպավորությունը, որը պահպանվել էր ժամանակակիցների հիշողության մեջ Վահանի վարքագծի վերաբերյալ։

---

4 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ս. Մալխասեանց. Տփղիս, 1904, Կե, էջ 116, տող 28—29։ Ստորև անանուն բոլոր հղումները վերաբերում են Ղազար Փարպեցու Պատմությանը։

5 Հմմտ. Մ. Օրմանյան. Ազգապատում. Կոստանդնուպոլիս, 1912, էջ 433. «Վահան ալ չվարանեցավ բռնել այն ճանփան, ուսկից գացեր էր յուր հոռեղբայրն ու օրինակելի տիպարը»։ Բայց Ռ. Գրուսեի կարծիքով, բանը չհասավ ուրացության, պարզապես Վահանը ստիպված է եղել քրիստոնյային անվայել ինչ-որ զիջումներ անել, ենթարկվելով պարսից արքունիքում տիրող ընդունելության կրաղաշտական կարգին. Г. Grousset. Histoire de l'Arménie p. 215.

Ինչպես էլ որ գնահատելու լինենք բերված տեղեկությունների արժանահավատությունը, պարզ է, որ հայերի մոտ բողոք էր առաջացել Պերոզ արքայի թաղաքականության դեմ, և Վահանն արդեն այդ ժամանակ ապստամբության ինչ-որ ծրագրեր էր մշակում։ Սակայն երկրում դեռևս խաղաղություն էր տիրում։ Հայերը, գոնե արտաքնապես, շարունակում էին պահպանել իրենց հավատարմությունը սասանյան իշխանությանը։

Բայց ահա հարևան Վիրքից հուզիչ լուր է հասնում՝ Վախթանգ թագավորը (446—502 թթ.) սպանել է Վազգեն (Վասակեն) բդեշխին[6], և Վրաց աշխարհում սկիզբ է առել «խռովություն յուզմանց»։ Հայ զորքը այդ պահին գտնվում էր Ադվանքում։ Վախթանգի ապստամբությունը ոգևորում է նրանց դիմելու կրտրուկ քայլերի, մանավանդ որ Վրաց արքան խոստումներ է անում, թե օգնության կգան հոների ջոկատներ, որոնք և կկռվեն պարսիկների դեմ։ Հավաքվելով Շիրակում, Ադվանքից վերադարձած զինվորները համոզում են Վահանին, որպեսզի նա միանա ապստամբությանը։ Սպարապետը նախապես զգուշանում է վճռական քայլերից, սակայն շուտով գալիս են ընդհանուր համաձայնության։ Հավատարմության երդում են տալիս ինչպես քրիստոնյաները, այնպես էլ ժողովին մասնակցող «ուրացողները» (ԿՋ, էջ 118—120)։

Նախարարներից մեկը՝ Վարաղ-Շապուհ Ամատունին, մատնում է պարսիկներին «միաբանության խորհուրդը»։ Պարսիկները և սեղացի «ուրացողները» փորձում են նախապես ապաստան գտնել Անի բերդում, ապա փախչում են Արտաշատի ուղղությամբ։ Հետապնդելով նրանց, նախարարները մտնում են Դվին, հետո պաշարում Արտաշատը, մինչդեռ Հայաստանի մարզպան Ատրվշնասպը զորք է կանչում Ատրպատականից։ Զորքը մոտենում է Երասխ գետին՝ նպատակ ունենալով մտնել Նախճավան գյուղը (ԿԷ, էջ 120—121)։

Ահա թե երբ և անցքերի ինչպիսի հերթականությամբ սկսվեց հայերի ապստամբությունը Սասանյանների դեմ։ Անցքերի շարքում առաջինը Վազգենի սպանությունն է, և բարեբախտաբար պատմիչը թվագրում է այն. Վախթանգը սպանեց բդեշխին Պերոզ արքայի 25-րդ տարում (ԿՋ, էջ 118, տ. 20—21)։

Սպանության թվականը որոշելիս պիտի հաշվի առնենք հետևյալը. երբ պատմիչը հաշվում է այս կամ այն տիրակալի իշխանության տևողությունը, նա կարող է թվել ոչ միայն տարիներն ու ամիսները, այլ անգամ օրերը։ Սակայն երբ դահակալության տարիները վեր են ածվում յուրատեսակ տոմարի (իսկ պարսից, ինչպես նաև հայոց իրականությունը հենց այդպիսին էր), առաջին տարին միշտ չէ, որ հաշվում են գահ բարձրանալու պահից։ Հայտնի է, որ Հազկերտ II-ի մահվանից հետո գահը անցավ նրա ավագ որդի Որմիզդ III-ին, սակայն Որմզդի եղբայր Պերոզը իսկույն ապստամբեց և միայն երկամյա անընդհատ կռիվներից հետո, սպանելով գահաժառանգին և մյուս եղբայրներին, հռչակեց իրեն արքայից արքա։ Եղիշեի պատկերացմամբ, Պերոզի թագավորությունը սկսվում է հենց այդ վերջին դիպվածից՝ երկու եղբայրներ կռիվ են սկսում թագավորության համար, ապա Միհրանի տոհմին պատկանող Իհամը (որը և իրապես գլխավորել է ըմբոստությունը), սպանելով թագավորի որ-

---

6 Բդեշխությունը այդ շրջանում վեր էր ածվել ինչ-որ չափով պարսկական վարչական մարմնի, որը պիտի ապահովեր երկրի հավատարմությունը պարսից արքունիքին։ Վազգենը եղել է Վարդան Մամիկոնյանի ժամանակակից հայտնի Աշուշա բդեշխի որդին, նրա կինը՝ Վարդանի դուստր Շուշանիկն էր։ Լինելով կրոնափոխ իշխան, նա փորձում է ստիպել Շուշանիկին ևս ուրանալ քրիստոնեությունը։ Շուշանիկը հրաժարվում է ու ամուսնու ձեռքից մարտիրոսական մահ ընդունում։ Նրա վկայաբանությունը, որտեղ տպավորվել է նաև Վազգենի կերպարը հայտնի է մի շարք հայերեն ու վրացերեն խմբագրություններով։ Վազգեն-Վասակենի մասին տե՛ս Toumanoff. Studies in Christian Caucasian History, p. 262—263. Բդեշխի սպանությունը նշան էր, որ Վախթանգ թագավորը բացահայտ կերպով հրաժարվել էր ճանաչել Սասանյանների գերագույն իշխանությունը, որը հաստատվել էր Արևելյան Վրաստանում IV դարի վերջերից։

դուն, «թագաւորեցուցանէր զիւր սանն, որում անուն էր Պերոզ»[7]։ Փարպեցու համար Պերոզը թագավոր է եղել իր եղբոր հետ հավասար՝ «և թագաւորեցին նորա (իմա՝ Հազկերտի) երկու որդիքն, հակառակելով ընդ միմեանս»։ Այնուհետև կրտսերը, սպանելով ավագին, «ինքն թագաւորեաց» «ի նոյն ամի թագաւորութեանն իւրոյ»։ Պերոզը հրաման է տալիս արձակել կապանքներից հայ նախարարներին (Կ, էջ 108, տ. 2—7)։ Ըստ մեր պատմիչի՝ Պերոզի թագավորությունը կարելի է հաշվել ինչպես հոր մահվանից, այնպես էլ եղբոր սպանությունից։

Վաղուց ի վեր պարզված է, որ այն դեպքում, երբ հաշիվը սկսվում է ապստամբությունից, Պերոզի առաջին տարին, ըստ պարսիկների մոտ ընդունված տոմարի, համապատասխանում է Հուլյան տոմարի 30.7.457—29.7.458-ին։ Իսկ եթե հաշիվը նկատի ունի Պերոզի միահեծան տիրակալությունը, ապա առաջին տարին է՝ 30.7.459—29.7.460։ 457/8 և 459/60 թթ. ընդունվում են գիտության մեջ և ենթակա չեն վերանայման[8]։ Այդ տվյալները ունեն անշուշտ նախ և առաջ տոմարագիտական նշանակություն. իրականում Հազկերտը կարող էր վախճանված լինել, իսկ գահաժառանգների կռիվը սկսվեր 457 թ. հուլիսի 30-ից առաջ։

Հայտնի է, որ հայկական շարժական տոմարը էապես չէր տարբերվում պարսկականից, սկզբունքը, ուղղակի թե անուղղակի ձևով, փոխ էր առնված նույն եգիպտացիներից[9]։ Երկու դեպքում էլ տարին բաղկացած է եղել 12 ամսից, յուրաքանչյուրը՝ 30 օր և 5 ավելյաց օրերից։ Այսպիսով, տարին ունեցել է 365 օր, առանց նահանջի, ուստի 4 տարին մեկ Հուլյան («հին») տոմարից ետ էր մնում 1 օրով. 120 տարին մեկ՝ 1 ամսով, իսկ 1461 տարվա ընթացքում, Հուլյանի հետ համեմատած, կորցնում 1 տարի։ Հայոց տարին 5 օր առաջ էր, քան պարսկականը։ Եթե ընդունենք, որ Փարպեցին հաշվումներն անելիս աչքի առաջ ունեցել է հայկական տոմարը, ապա Պերոզի առաջին տարին կլինի համապատասխանորեն 4.8.457—3.8.458 կամ 4.8.459—3.8.460 (տարբերությունը պարսկական տոմարով կատարած հաշվումների համեմատությամբ չնչին է ու կարող է անտեսվել)։

Ընդունելով այդ տվյալները իբրև ելակետ, Վաղգենի սպանությունը, որն ըստ Ղազար Փարպեցու, տեղի է ունեցել Պերոզի 25-րդ տարում, պիտի դնենք կամ 481/2 կամ 483/4 թ.։ Մեր հետագա շարադրանքից ինքնին կպարզվի, որ երկրորդ թվագրությունը բացառված է[10], ուստի պիտի ընդունենք, որ Վահ-

---

7 Եղիշեի վասն Վարդանայ և հայոց պատերազմին, աշխատ. Ե. Տեր-Մինասեան. Երևան, 1957, էջ 197. հմմտ. Եղիշեի Վարդանանց պատմությունը, թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով Ե. Տեր-Մինասյանի. Երևան 1946, էջ 312, ծան. 205 (թագավորության տարիները գնում է 458/9—484). Elishe. History of Vardan and the Armenian War. Harvard University Press, Cambridge Massachusetts, London England, 1982 (էջ 242, ծան. 10, 459—484 թթ.)։

8 Th. Noldeke. Geschichte der Perser und Araber sur Zeit der Sasaniden. Leyden, 1879, S. 425—427. Grundriss der iranischen. Philologie herausgegeben von W. Geiger und E. Kuhn. Strassburg, 1896—1904, S. 530. A. Christensen. L'Iran sous les Sassanides. Copenhague, 1944, 289—290. Եղիշեի Վարդանանց պատմությունը, էջ 91 և հտ.։

9 Տե՛ս օրինակ՝ Э. Бикерман. Хронология древнего мира. М., 1975 с. 35—38. Արդարև է միայն դարմանալ, երբ տոմարի ժամանակակից մասնագետը առանց այլևայլության հայտարարում է. «Календарь армян имеет древнее происхождение, носит самостоятельный характер и не заимствован у древних народов, как считали многие авторы» (Культура раннесредневековой Армении. Ереван, 1980, с. 238).

10 Բայց հենց այդպես է հաշվում Մ. Աբեղյանը. տե՛ս նրա Հայոց հին գրականության պատմություն. հ. Ա, Երևան, 1944, էջ 344։ Ռ. Գրուսեի մոտ նշված է 475 թ.՝ արդյո՞ք չփոթել է Շուշանիկի մարտիրոսության ենթադրյալ թվականի հետ։ Բայց նույն էջում Շուշանիկի մահը գնում է 458 թ. (տե՛ս նշվ. աշխ., էջ 216)։ Ղազար Փարպեցու Պատմությանը վերաբերող մի-

թանգը սպանել է բդեշխին 481/2 թ., ավելի ճիշտ՝ 24.7.481—23.7.482, եթե հաշվենք ըստ պարսկական տոմարի, կամ 29. 7.481—28.7.482՝ ըստ հայկականի[11]։

Եթե բավարարվելու լիներ միայն սպանության թվականին վերաբերող ցուցմունքով, ապա համապատասխանորեն պիտի թվագրենք նաև ապստամբության սկիզբը՝ 481/2 թ.։ Բարեբախտաբար, Փարպեցու Պատմության մեջ կան մի շարք նշումներ, որոնք հնարավոր են դարձնում որոշակի ընտրություն կատարել 481 և 482 թթ. միջև։

Մենք տեսանք, որ սպանության տարին եղել է միաժամանակ նաև ապստամբության առաջին տարին (այսուհետև տարին նկատի ունենք մեր հասկացողությամբ, հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը)։ Պատմելով մի շարք դիպվածների մասին, որոնցից հատկապես աչքի են ընկնում Անիի ու Արտաշատի պաշարումը (ԿԷ), Վահանին՝ սպարապետ, իսկ Սահակ Բագրատունուն՝ մարզպան ընտելը (ԿԸ), Ակորիի ճակատամարտը (ԿԹ)՝ բոլորն էլ բդեշխի սպանությունից հետո, հեղինակը նշում է, որ ապստամբներն «ի հանգիստ ձմեռայնոյն մտանէին. հոգային առ զարունն դպատրաստութիւն պատերազմին» (ԿԹ, էջ 126, տ. 22—23)։ Այնուհետև հայերը դեսպան են առաքում Վախթանգ թագավորի մոտ, որպեսզի նա, իր խոստումներին համաձայն, հոներից կազմված ջոկատներ ուղարկի օգնության։ Վախթանգը տրամադրում է 300 հոն, բայց «չև ևս անցեալ ամիս մի ի ձմեռայնոյն՝ փոյթ պատճառադրութեամբ անդրէն առ ինքն կոչէր» (Հ, էջ 126, տ. 27—28)։ Նախքան մյուս փասաևերին դիմելը պիտի ընդգծենք, որ Ղազար Փարպեցին շարադրելիս երբեք ետ ու առաջ չի վազում, շարադրության կարգը լրիվ համապատասխանում է դեպքերի իրական հերթականությանը։

Փարպեցու ժամանակագրական հաջորդ ցուցմունքը նկատի ունի անշուշտ ապստամբության երկրորդ տարին։ Հեղինակն ասում է, որ Վահանին օգնության են գալիս Անձևացյաց Հոհանը և Երվանդունի Ներսեհը։ Առեստ քաղաքացյուղին նրանք մոտենում են «ի ժամանակի քսանորդացն պահոց, ի մեծի շաբաթու զատկին» (Հ, էջ 127, տ. 26—27)։ Եթե որոշենք՝ ինչին է համապատասխանում ապստամբության այդ երկրորդ տարին ըստ մեր տոմարի, ապա պարզել զատկի և նրան նախորդող մեծ շաբաթվա օրը միանգամայն հնարավոր է։

Հաջորդ գլխի առաջին նախադասությունն է՝ ապստամբները «անցուցեալ զաւուրս զառնաշունչ ձմեռայնոյ ցրտոցն՝ հասանէին զարնանային ժամանակի օդոյն բառեխառնութեան» (ՀԱ, էջ 128, տ. 14—15)։ Այդ նախադասությունը վերաբերում է նույն՝ ապստամբության երկրորդ տարվա սկզբին։ Երկրորդ տարվա հիմնական դիպվածներն են՝ Ներսեհապատի ճակատամարտը (ՀԱ), Վարդ Մամիկոնյանի վերադարձը (ՀԲ), Ճարմանայնի դաշտի ճակատամարտը, որտեղ զոհվեցին ասպետ Սահակ Բագրատունին և Վահանի եղբայր Վասակ Մամիկոնյանը (ՀԳ—ՀԴ)։ Խոսելով հայերի գալստյան մասին Վիրք՝ Վախթանգ թագավորին օգնության, Փարպեցին նշում է, որ «տօթ էր ժամանակն» (ՀԳ, էջ 133, տ. 14)։ Ճարմանայնի ճակատամարտը տեղի է ունեցել, այսպիսով, ամռան կամ վաղ աշնան ամիսներին։ Այդ երկրորդ տարվա ընթացքում է, որ Վահանը նահանջել է դեպի Տայք (ՀԵ), իսկ Հազդ Սյունին՝ նահատակի մահ ընդունել (ՀԶ)։ Վերջին դեպքը եղել է հոռի ամսի 16-ին։ Իմանալով տարին ըստ մեր տոմարի, հեշտությամբ կորոշենք նաև այդ օրը։

ծանոթագրության մեջ տպված է հետևյալը. «Ապստամբությունը ըստ Փարպեցու տեղեկության, տեղի է ունեցել Պերոզի գահակալության 25-րդ տարում։ Հայտնի է, որ Պերոզը գահակալել է 459 թ., հետևապես ապստամբությունը պետք է տեղի ունեցած լիներ 484 թ.։ Սակայն որոշ իրադարձություններից երևում է, որ այն բռնկվել է 481 թ. աշնանը»։ (Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. հ. 1, Երևան, 1981, էջ 588, ծան. 7)։

11 Որպես հիմք ընդունել ենք Թ. Նյոլդեկեի ու Է. Դյուլորիեի համապատասխան աղյուսակները՝ Nöldeke. Op. cit., S. 436։ E. Dulaurier. Recherches sur la chronologie Arménienne. Paris, 1859, էջ 384։

Վահան Մամիկոնյանը ժամանում է Այրարատ գավառը, այցելում եկեղեցիներ, նվիրատվություններ անում։ Վահանը և իր ընկերները, նշում է մեր հեղինակը, «երթեալք հանգչէին ի բնական ոստանին Հայոց ի Դունի մինչ զաւուրս ցրտաշունչ ձմեռայնոյն սառնամանեացն անցուցանէին» (ՀԷ, էջ 141, տ. 14—15)։ Ապստամբության երկրորդ տարին ավարտվում է։

Այդ ձմեռ Վիրքից պատվիրակներ են գալիս համոզում հայերին, թե իբր Վասակ Մամիկոնյանն ու Սահակ Բագրատունին Ճարմանայնի մարտից հետո կենդանի են մնացել, այժմ հայրենակիցներին օգնության են կանչում։ Վահանը կռահում է այդ սուտ լուրի նպատակը՝ «գիտացեալ զեկս պարսիկ գումարտակի զարնանի յերկիրս Հայոց» ուզում են պառակտում առաջացնել ու հայ զորականների մի մասին ստիպել հեռանալ դեպի Վրաց աշխարհը (ՀԷ, էջ 142, տ. 35—143, տ. 2)։ Նորեկները հասնում են իրենց նպատակին՝ սեպուհ Մուշեղ Մամիկոնյանը իր զինվորների հետ միասին լքում է Դվինը։ Մուշեղը թողնում է Դվինը՝ ձմռանը «խելացնորեցուցեալ յածեցուցանէին... մինչև ցվախճանն ցրտաշունչ հողմոց ձմեռայնոյն սառնամանեաց» (ՀԷ, էջ 143, տ. 35—37)։ Իսկ «եկեալ ժամանակ ծաղկոցաց զարնանոյն ոդոյն շնչմանց, աւետաւոր ջերմութեանց մերկոցն չքաւորաց» (ՀԷ, էջ 143, տ. 38—39)՝ Հայաստան է ներխուժում և Արտաշատը պաշարում Զարմիհր Հաղարավուխտի բանակը։ Ապստամբության երրորդ տարին արդեն սկսվել է։

Ապստամբների համար դա ծանր տարի է եղել. Զարմիհրը հալածում է Վահանին մինչև Հայաստանի բյուզանդական մասը։ Վարթանը փախչում է Եգերաց աշխարհը։ Պատերազմական գործողությունները շարունակվում են, լարվածությունը՝ աճում։ Հակառակ ուժերի բացահայտ անհավասարությանը, Վահանը կարողանում է ծանր հարվածներ հասցնել պարսիկներին։ Պերոզ արքայի կարգադրությամբ Զարմիհր Հաղարավուխտը մտնում է Վիրք, Հայաստանի մարզպան է նշանակվում Շապուհը՝ Միհրանի տոհմից։ Եթե հավատանք Փարպեցուն, Վահանը սարսափ է ներշնչում Շապուհին, մարզպանը իրեն կորցնում է։ Եվ այդ պահին Պարսից աշխարհից անսպասելի լուր է հասնում՝ հեփթաղների դեմ մղվող պատերազմում սպանվել է արքայից արքա Պերոզը։ Պերոզին հաջորդած Վաղարշը և նրա շրջապատը հիմնովին փոխում են իրենց քաղաքականությունը հայերի, վրացիների, աղվանների նկատմամբ, և շուտով Նվարսակ գյուղում Վահան Մամիկոնյանը թելադրում է հաշտության պայմանները։

Վերոգրյալ դիպվածները տեղի են ունեցել անշուշտ ապստամբության երրորդ տարվա ընթացքում, ձմեռվանից անմիջապես հետո։ Անցքերը վրա են գալիս արագությամբ, ժամանակի հաշիվը լինում է օրերով։ Շարադրանքը հագեցված է այսօրինակ դարձվածքներով՝ «և ոչ աւուրբ միով յառաջ ժամանեցին» (էջ 145, տ. 3), «ի նմին աւուր... գայր հասանէր» (էջ 145, տ. 8—9), «ի վաղիւն» (էջ 145, տ. 26, էջ 154, տ. 16), «զամենայն օր ոչ տայր դուլ առնուլ... զցայգ ամենայն նետաձիգ լինելով» (էջ 148, տ. 9—10), «կամեցեալ հանգչել աւուրս երկուս» (էջ 149, տ. 23), «յետ հինգ աւուր» (էջ 150, տ. 3), «դոնեա զայն գիշեր հանգստիւ յագեալ քնով» (էջ 150, տ. 11), «հանգչէր զմնացեալ մասն ի գիշերոյն... և ի ծագել լուսոյն երթեալ բանակէր» (էջ 150, տ. 27—29), սրա հետ մեկտեղ նաև «խաբելով զՇապուհ ի բաղում աւուրս» (էջ 147, տ. 21)։ Ոճի նման առանձնահատկությունները համոզում են, որ ձմեռվանից մինչև Պերոզի մահը (բերված բոլոր օրինակները վերաբերում են այդ ժամանակամիջոցին) անցել են միայն ամիսներ, ապստամբության երրորդ տարին դեռևս չի լրացել։

Պերոզը սպանվել է 484 թ. սկզբին[12], ասել է՝ գարնանը, երբ կլիմայական պայմանները կարող էին թույլ տալ վերսկսել պատերազմական գործողությունները Միջին Ասիայում։ Մահվան բոթը Հայաստան պիտի հասած լիներ մի առ ժամանակ հետո։ Պերոզի հաջորդ Վաղարշի առաջին տարին է՝ 23.7.484—22.7.485։ Ընդունելով, որ ապստամբությունը ավարտվել է 484 թ. (ուշ

[12] Noldeke. Op. cit., p. 425—426, 435.

գարնանը կամ ամռանը, տվյալ դեպքում դա կարևորություն չունի), ելնելով նրանից, որ դա ապստամբության երրորդ տարին է, գալիս ենք միակ հնարավոր եզրակացությանը՝ ապստամբության առաջին տարին 482 թ. է. տատանումները 481 և 482 թթ. միջև մերանում են։ Վազգենի սպանությունից մինչև Պերոզի մահը անցել են 482 թ. մի մասը, ամբողջ 483 թ. և 484 թ. առաջին ամիսները։

Որոշակի եզրակացության ենք գալիս նաև վերևում հիշատակված գատկի վերաբերյալ։ Փարպեցին նկատի է ունեցել երկրորդ տարվա, այսինքն 483 թ. գատիկը, որը եղել է ապրիլի 10-ին, ուստի մեծ շաբաթվա օրը գալիս է ապրիլի 9-ին։ Լուծվում է նաև Հազդ Սյունու սահատանության օրը. 483 թ. հոռի 16-ը (շարժական տոմարի 46-րդ օրը) գալիս է սեպտեմբերի 12-ին։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ ո՛չ 481 թ., ո՛չ էլ 484 թ. որպես ապստամբության սկզբի տարիներ չեն համապատասխանում իրականությանը։ Երկրորդ թվականի ծագումը հեշտ է կռահել. հաշվելով Պերոզի գահակալությունը 459 թվականից, գումարելով դրան 25, ստացել են 484 (Վազգենի սպանությունը), իսկ այն, որ առնվազն մեկուկես տարի տևող շարժումը 484 թ. սկսվելով չէր կարող ավարտվել նույն թվականին՝ վրիպել է ուշադրությունից։

Ինչ վերաբերում է 481 թ., ապա այն բխում է Մ. Չամչյանի թվագրությունից։ Վկայակոչելով Ղազար Փարպեցուն և Վարդանին, Չամչյանը 481 թ. տակ շարադրում է Վազգենի սպանությունը և դրան հաջորդող դեպքերը՝ մինչև ձրմեռ[13]։ Պարզ է, որ դրանով խախտվում է նաև մյուս ոստիկանների թվագրությունը։ Նույն հաշիվը յուրացրել է նաև Մ. Օրմանյանը[14], բայց քանի որ վերջինս հեղինակությունն է հանդիսանում ժամանակագրական հարցերը լուծելիս, ապա 481 թ. քննադատական մոտեցման եռբեք չի արժանացել։ Ի դեպ, Օրմանյանի ժամանակագրական տվյալները ընկած են Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանի» բազմաթիվ հոդվածների հիմքում։

Մեր ուսումնասիրության արդյունքները ստիպում են նաև ճշտել Փարպեցու մոտ հիշատակված մի շարք պատմական անձնավորությունների մահվան տարեթվերը։ Ինչպես Մ. Օրմանյանի, այնպես էլ Հ. Աճառյանի մոտ դրանք սխալ են թվագրված։ Նշենք միայն մի օրինակ. հայտնի է, որ շատ գիտնականներ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» համար որպես terminus ante quem ընդունում են 482 թ.՝ ասպետ Սահակ Բագրատունու մահվան թվականը, քանի որ, նրանց կարծիքով, այդ Սահակին է ձոնած եղել Մովսեսը իր երկը[15]։ Իրականում Սահակը զոհվել է 483 թ. տեղի ունեցած Ճարմանայնի ճակատամարտում։

КОГДА НАЧАЛОСЬ ВОССТАНИЕ, ВОЗГЛАВЛЕННОЕ ВААНОМ МАМИКОНЯНОМ?

Доктор ист. наук К. Н. ЮЗБАШЯН (Ленинград)

Резюме

Основным источником для изучения антисасанидского восстания народов южного Предкавказья является «История Армении» Лазара Парпеци (ок. 500 г.). Движение началось с убийства бдешха Вазгена-Варскена в 25-й год персидского царя Пероза (отсчет в данном случае от 457/8 г.), завершилось со смертью Пероза (первая половина 484 г.). Многочисленные указания Лазара Парпеци на смену времен года, к которым приурочиваются события, позволяют твердо датировать восстание 482—484 гг. Распространенные в литературе даты его начала 481 и 484 гг.—основаны на недоразумении.

---

13 Մ. Չամչեան. Պատմութիւն Հայոց. Բ, Վենետիկ, 1785, էջ 160—169։

14 Մ. Օրմանյան. Ազգապատում. առաջին մաս, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 454։

15 Վերաբերում են միայն նորերս լույս տեսած աշխատությունը՝ Г. Х. Саркисян. Мовсес Хоренаци.—В кн.: Видные деятели армянской культуры (V—XVIII вв.). Ереван, 1982, с. 57.